

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԳԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Լևոն Գեվորգյան

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
ասպիրանտ, Վաշինգտոնի իրավագիտության
քոլլեջի մագիստրոս (LLM)*

Քանի դեռ երկարաձգվում է արցախյան հիմնահարցի քաղաքական լուծումը, պարբերաբար տեղի ունեցող սահմանային ընդհարումները շարունակում են բազմաթիվ մարդկային զոհեր առաջացնել, և չնայած 1994թ. մայիսի 16-ին կնքած զինադադարին՝ Ադրբեջանի Հանրապետությունը (այսուհետ՝ ԱՀ) շարունակում է սպառնալիցությունների ակտիվ մրցավազքը, պարբերաբար խախտում է զինադադարն ու սպառնում դիմել «ինքնապաշտպանության»՝ անգամ ակտիվ ռազմական գործողությունների ավարտից 16 տարի անց: Այս խնդիրները, սակայն, չեն արժանանում պատշաճ իրավական որակման միջազգային ատյաններում:

Արցախյան հիմնահարցի վերաբերյալ ԱՀ իրավական դիրքորոշումը մանրամասն շարադրվել է 2008 թ. դեկտեմբերի 22-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հղած նամակում², որտեղ ԱՀ-ն պնդում է, որ Լեռնային Ղարաբաղն ու շրջակա տարածքներ բռնազավթվել (օկուպացվել) են ՀՀ զինված ուժերի կողմից, որ բռնազավթումն ինքնին զինված հարձակման նյութականացված ձև է, և, հետևաբար, այն «տուժող» կողմին՝ ԱՀ-ին, իրավունք է վերապահում դիմելու ինքնապաշտպանության «այն պահից, երբ ակնհայտ կդառնա, որ ձգձգված բանակցությունները չեն հանգեցնում ոչ մի արդյունքի»³: Նման դիրքորոշումը, սակայն, առաջացնում է մի շարք իրավական խնդիրներ, որոնց և կփորձենք անդրադառնալ:

II. Արդյո՞ք բռնազավթումը ագրեսիայի դրսևորում է

Բռնազավթումը որպես ագրեսիայի տատեսակ բնորոշող սակավաթիվ փաստաթղթերից ամենահայտնին թերևս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած թիվ 3314-ին բանաձևին կից «Ագրեսիայի բնորոշումն» է⁴: Այս փաստաթղթի վկայակոչումը, սակայն, անխուսափելիորեն առաջ է բերում մի շարք հիմնահարցեր: Առաջին, արդյո՞ք «Ագրեսիայի բնորոշումը» սովորության միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս է:

Նիկարագուայի տարածքում և նրա դեմ ռազմական ու ռազմականացված գործողությունների վերաբերյալ գործով ՄԱԿ-ի Միջազգային դատարանը նշել է որ ԳԱ-ի «Ագրեսիայի բնորոշման, 3-րդ հոդվածի (ց) կետը ... արտացոլում է սովորության միջազգային իրավունքը»⁵: Բանաձևի վերոնշյալ դրույթը խոսում է «պետության կողմից կամ անունից՝ զինված ջոկատներ, միավորումներ, անկանոն զինված խմբավորումներ և վարձկաններ այլ պետության դեմ ... զինված ուժ գործադրելու նկատառումով ուղարկել[ու]...» մասին: Սակայն Միջազգային դատարանի վճիռը չի անդրադառնում բանաձևի այլ դրույթների սովորության բնույթին: Այս հարցի շուրջ դոկտրինալ մոտեցումները տարբեր են: Մի շարք հեղինակներ գտնում են, որ դատարանի կարծիքը նպատակ էր հետապնդում ընդգծելու ողջ բանաձևի՝ սովորության միջազգային իրավունքի մաս լինելը⁶: Այս տեսանկյունից անհրաժեշտ է մատնանշել, որ թիվ 3314 բանաձևն ընդունվել է առանց քվեարկության, մինչդեռ Միջազգային դատարանը մի շարք դեպքերում դիտարկել է ԳԱ բանաձևերի՝ միաձայն ընդունված լի-

նելու հանգամանքը որպես *opinio juris*-ի վկայություն⁷:

Հեղինակների մյուս խոսքը, ինչպես օրինակ պրոֆեսոր Ա. Կասսեզեմ, առավել զգուշավոր են և գտնում են, որ բանաձևն առնվազն մասամբ է արտացոլում ագրեսիայի համընդհանուր ճանաչում ստացած և հետևաբար արգելված եղանակները⁸: Սակայն, օրինակ, Թ. Մերոնը, ԱՄՆ-ի անունից մասնակցելով Միջազգային քրեական դատարանի ստատուտի նախապատրաստական աշխատանքներին, նշել է. «Մենք չենք փոխում մեր համոզմունքն առ այն, որ բանաձևը չի շարադրում սովորության նորմեր... Ընդունման պահին բանաձևը չէր ամրագրում արդեն կայացած սովորության միջազգային իրավունքը: [...Ավելին,] բանաձևի վրա հիմնված միօրինակ պրակտիկա երբեք չի էլ կայացել: Պարզապես նայեք Անվտանգության խորհրդի լուսնների արձանագրությունները: Եվ եթե որևէ մեկը դեռ ուներ կասկածներ, ապա բանաձև 3314-ի վերաբերյալ մեր քննարկումների ընթացքում առկա հակասություններն ակնհայտորեն ցուցադրում են *opinio juris generalis*-ի բացակայությունը»⁹:

Տրամաբանությունը, որն ընկած է Միջազգային դատարանի կարծիքի հիման վրա ողջ բանաձևը սովորության միջազգային իրավունքի մաս համարելու փորձերի հիմքում, այն է, որ բանաձևի 3-րդ հոդվածի (g) կետը բանաձևի նախապատրաստական աշխատանքների ընթացքում առավել վիճահարույց էր¹⁰ և այս տրամաբանության համաձայն, եթե ամենավիճահարույց դրույթն անգամ որակվել է Միջազգային դատարանի կողմից որպես սովորության միջազգային իրավունքի մաս, ապա մնացած դրույթներն ինքնըստինքյան պետք է լինեն կայացած սովորության նորմեր¹¹: Որքան հիմնավորված կարելի է համարել նման դատողությունը:

3-րդ հոդվածի (g) կետը նշում է. «Ագրեսիա է համարվում նաև պետության կողմից կամ անունից՝ զինված ջոկատներ ... այլ պետության դեմ այնպիսի ծանրության

զինված ուժ գործադրելու նկատառումով ուղարկելը, որը հավասարազոր կլինի նախորդ կետերում թվարկված գործողությունների ծանրությանը»: Սույն դրույթի վերջին մասը ցույց է տալիս, որ այն արժեք ունի միայն նախորդ կետերի հետ կապի մեջ: Ինչպես ինքը՝ Միջազգային դատարանն է նշում, զինված ջոկատներ ուղարկելը կարող է որակվել որպես զինված հարձակում միայն ծանրության այնպիսի աստիճանի հասնելու դեպքում, «որը կորակվեր որպես զինված հարձակում ..., եթե իրականացվեր կանոնավոր զինված ուժերի կողմից»¹²:

Այսպիսով, ցույց տալուց հետո, որ Նիկարագուայում գտնվող համապատասխան խնբավորումների և ԱՄՆ-ի միջև առկա կապը բավարար չէր առաջինների գործողությունները ԱՄՆ-ին վերագրելու համար¹³, Միջազգային դատարանը նշեց, որ «ապստամբներին զենք կամ տեխնիկական կամ այլ բնույթի օժանդակություն տրամադրելը կարող է որակվել որպես ուժի գործադրման սպառնալիք կամ հանդիսանալ միջամտություն այլ պետության ներքին կամ արտաքին գործերին», բայց ոչ զինված հարձակում պետության կողմից¹⁴:

Այլ խոսքերով՝ Միջազգային դատարանը նշված բանաձևի 3-րդ հոդվածի (g) կետի հետ վարվեց պարզապես ինչպես ոչ պետական կազմավորումների գործողությունները պետություններին վերագրելու ինստիտուտը կարգավորող նորմի հետ: Հետևաբար, քանի որ վերագրելիության հիմնախնդիրը կարգավորող նորմերի ամբողջությունը վերաբերում է միջազգային իրավունքի՝ պետությունների պատասխանատվությունը կարգավորող ճյուղին¹⁵, այլ ոչ թե ուժի գործադրման վերաբերյալ նորմերի ամբողջությանը, վկայակոչվող տրամաբանությունը (որի համաձայն փաստաթղթում ամրագրված մեկ նորմի սովորության լինելու հետևանքով մյուս նորմերը նույնպես պետք է սովորության լինեն) պարզապես չի գործում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԲ

Եվ այն փաստը, որ դրույթները հայտնվում են նույն փաստաթղթում, ոչինչ չի փոխում, և ոչ էլ որևէ նշանակություն ունի այն հանգամանքը, որ 3-րդ հոդվածի (g) ենթակետը ամենավիճահարույցն էր բանաձևի նախապատրաստական աշխատանքների ընթացքում: Ավելին, *travaux préparatoires*-ի ընթացքում հիմնական հակասությունները վերաբերում էին պետության՝ զինված ջոկատների գործունեությանը մասնակցելու կամ դրանց վերաբերյալ իմացության անհրաժեշտ աստիճանը որոշելուն, որը բավարար կլիներ պետությանը ազդեցություն համար¹⁶: Յետևաբար քննարկումների դժվարությունները ոչ մի կապ չունեին ազդեցիկի որևէ կոնկրետ տարատեսակի բնորոշման հետ, և այն, որ օկուպացիան նույնպես հիշատակվում է բանաձևում, բոլորովին էլ չի նշանակում, որ այն ինքնընտանցիկ սովորույթային միջազգային իրավունքի մաս է կազմում: Ավելին, ընդհանրապես վիճելի է բռնազավթման ինստիտուտի *jus ad bellum* (պատերազմ վարելու իրավունք) իրավունքի նորմերին պատկանելու հիմնահարցը:

Բռնազավթում և *jus ad bellum*: «Բռնազավթում» եզրույթը պարունակող իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բոլորը պարունակում են *jus in bello* (պատերազմի ժամանակ գործող իրավունք), այլ ոչ թե *jus ad bellum* նորմեր: Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների վերաբերյալ կանոնները¹⁷, պատերազմի զոհերի պաշտպանության մասին ժնկի 1949թ. կոնվենցիաները կամ Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին Լրացուցիչ 1-ին արձանագրությունը, որոնք կարգավորում են բռնազավթման հետ կապված հիմնախնդիրներ, բոլորն էլ վերաբերում են *jus in bello* իրավունքի ճյուղին: Ավելին, միջազգային անվտանգությունը կարգավորող կամ պետությունների

կողմից ուժի գործադրման վերաբերյալ (*jus ad bellum*) նորմեր պարունակող և ոչ մի միջազգային պայմանագիր չի օգտագործում «օկուպացիա» եզրույթը¹⁸ (թերևս միակ բացառությունը կարող է դառնալ Միջազգային քրեական դատարանի ստատուտը՝ ազդեցիկի հանցանքի վերաբերյալ համապատասխան հավելումների ենթարկվելուց հետո):

Ինչ վերաբերում է Գլխավոր ասամբլեայի կողմից տրված ազդեցիկի բնորոշմանը, ապա այն արգելում է բռնազավթումը, միայն եթե վերջինս հետևանք է զինված ուժերի կողմից նվաճման կամ հարձակման¹⁹: Նույնը կարելի է ասել նաև Գլխավոր ասամբլեայի՝ այս հարցին անդրադարձող այլ բանաձևերի վերաբերյալ, ներառյալ *ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների 1970 թ. հռչակագիրը* (այսուհետ՝ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիր*), որը ուժ կամ ուժի սպառնալիք գործադրելուց ձեռնպահ մնալու սկզբունքի ներքո սահմանում է. «Պետության տարածքը չպետք է լինի ռազմական բռնազավթման առարկա՝ ի հետևանք ՄԱԿ-ի կանոնադրությունը խախտող ուժի գործադրման»:

Այլ խոսքերով՝ հակառակ Ադրբեյջանի դիրքորոշման, բռնազավթման փաստը (անգամ եթե այն ապացուցված է) հիմք չի հանդիսանում *per se* «օկուպանտ» պետության դեմ ուժի գործադրման համար²⁰: Յետևաբար, ինքնապաշտպանության իրավունքը կարող է վկայակոչվել Ադրբեյջանի կողմից միայն այն դեպքում, եթե ՀՀ-ն է ուժ գործադրել, և եթե վերջինս է բռնազավթել Ադրբեյջանի տարածքի համապատասխան մասը: Ադրբեյջանի նման խճճված տրամաբանության պատճառն այն է, որ ԱՀ-ն չի ճանաչում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և հետևաբար չի կարող վկայակոչել ինքնապաշտպանության իրավունքը վերջինիս դեմ²¹:

III. Բռնագավթե՞լ է արդյոք Հայաստանի Հանրապետությունը Արցախի տարածքը

Հանուն արդարության՝ անհրաժեշտ է նշել, որ քննարկվող հիմնահարցին առնչվող ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերն իրոք օգտագործում են «օկուպացված շրջաններ»²² ձևակերպումը, սակայն ոչ թե բուն ԼՂՀ-ի, այլ վերջինից դուրս գտնվող տարածքների կապակցությամբ, մինչդեռ որպես օկուպացնող ուժեր հիշատակվում են ոչ թե ՀՀ զինված ուժերը, այլ «հայկական լոկալ ուժերը»²³: Նույն տրամաբանությունն է կիրառում նաև ԵԱՀԿ-ն՝ օգտագործելով «օկուպացիա» եզրույթը միայն ԼՂՀ-ի շրջակայքում գտնվող տարածքների վերաբերյալ²⁴: Չնայած այս ամենին Ադրբեջանը շարունակում է պնդել, թե ՀՀ-ն բռնագավթել է իր տարածքի 20%-ը՝ ներառյալ Արցախի տարածքը²⁵:

Բռնագավթման չափանիշները միջազգային իրավունքում: Բռնագավթման բնորոշումը տրված է պայմանագրային և սովորութային միջազգային իրավունքում: Ցանաքում պատերազմի օրենքների և սովորույթների վերաբերյալ կանոնների 42-րդ հոդվածի համաձայն. «Տարածքը համարվում է բռնագավթված, երբ այն փաստացի հայտնվում է հակառակորդի զորքի իշխանության ներքո: Բռնագավթումը տարածվում է միայն այն տարածքի վրա, որտեղ նման իշխանություն հաստատվել է և կարող է իրականացվել»: Միջազգային դատարանը *Օկուպացված պաղեստինյան տարածքում պատի կառուցման իրավական հետևանքների վերաբերյալ* խորհրդատվական եզրակացությունում նշել է, որ վերոհիշյալ դրույթն արտացոլում է սովորութային միջազգային իրավունքը²⁶: Այնուհետև *Կոնգոյի տարածքում զինված գործողությունների* վերաբերյալ իր վճռում²⁷ Միջազգային դատարանը նշեց. «Որպեսզի պարզել, թե «օկուպացնող ուժ» է արդյոք այն Պետությունը, որի զինված ուժերը գտնվում են այլ պետության տարածքում ներխուժման (ինտերվենցիայի) արդյունքում ..., Դատարանը պետք է քննի, թե

արդյոք առկա է բավարար ապացույց ներխուժած պետության կողմից իշխանության հաստատման և իրականացման վերաբերյալ: [Հետևաբար] ... Դատարանը պետք է համոզվի, որ ներխուժած զինված ուժերը ոչ միայն տեղաբաշխված [են] կոնկրետ դիրքերում, այլ նաև փոխարինել [են] տեղական կառավարության իշխանությունը՝ սեփական իշխանությամբ»:

Այսպիսով, որոշակի իրադրություն բռնագավթում որակելու համար անհրաժեշտ է. 1) առկա լինեն ներխուժած և հակառակորդ պետությանը պատկանող զինված ուժեր, 2) այդ ուժերը պետք է ստանձնած լինեն պետական-իշխանական գործառույթների իրականացումը, 3) պետք է լինեն բռնագավթողի իշխանության հաստատմանը նախորդած պետական կառույցներ, որոնք պետք է զրկվեն իրենց իշխանությունն իրականացնելու հնարավորությունից²⁸: Այդ իսկ պատճառով, վերոհիշյալ չափանիշները կիրառելով, Միջազգային դատարանը գտավ, որ Ուզանդան բռնագավթել է Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության միայն մեկ մասը, որտեղ ստեղծել էր նոր վարչական միավոր, և ոչ թե բոլոր այն տարածքները, որտեղ տեղաբաշխված կամ առկա էին նրա կանոնավոր զինված ուժերը²⁹: Իսկ Կոնգոյի՝ այսպես կոչված անուղղակի ադմինիստրացիայի վերաբերյալ մեղադրանքները, որը Ուզանդան իբրև թե իրականացնում էր՝ վերահսկելով լոկալ ապստամբներին, Միջազգային դատարանի կողմից չարժանացան հավանության³⁰:

Եվս մեկ շատ կարևոր հանգամանք, որն անհրաժեշտ է մատնանշել մեզ հետաքրքրող կոնֆլիկտի կոնտեքստում. Ադրբեջանը չի կարող որակել ԼՂՀ-ն որպես «օկուպացնող ուժ», քանի որ այն պարզապես չի ճանաչում ԼՂՀ-ի հետ հակամարտությունը որպես միջազգային զինված ընդհարում³¹, մինչդեռ այդ հասկացությունը կիրառելի է միայն միջպետական կոնֆլիկտներում³²: Հետևաբար, «բռնագավթում» եզրույթի կիրառումը Ադրբեջանի համար եղել և շարունակվում է լինել իրենց իշխանությանը հարցադրող և շարունակվող իրադրությունների արդյունքում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԲ

նակում է մնալ հնարավոր միայն Արցախի տարածքը՝ Հայաստանի Հանրապետության կողմից բռնազավթված լինելու հանգամանքը ապացուցելու դեպքում:

Իրականացնում է արդյոք Հայաստանի Հանրապետությունը իշխանական գործառույթներ Արցախի տարածքում: Այս տեսանկյունից կարևորը ոչ թե հայաստանյան գործառնականությունների՝ ԼԴՀ-ի տարածքում ներկա գտնվելու հիմնախնդիրն է, այլ այն, թե վերջիններս իրականացնում են իշխանական գործառույթներ, թե՞ ոչ: Հետևաբար կարևոր է նշել, որ ԼԴՀ-ն ունի սեփական օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ, քաղաքական կուսակցություններ և ներքին քաղաքական ընդդիմություն³³: ԼԴՀ-ն ունի Սահմանադրություն և մշտական ներկայացուցչություններ վեց պետություններում (ներառյալ ԱՄՆ-ում և Ռուսաստանի Դաշնությունում) և Մերձավոր Արևելքում³⁴: Ավելին, Freedom House հասարակական կազմակերպության 2009 հաշվետվության համաձայն, որը գնահատում է ժողովրդավարական ազատությունների աստիճանն ամբողջ աշխարհում, ԼԴՀ-ն պատկանում է մասամբ ազատ պետությունների թվին՝ ունենալով քաղաքական իրավունքների ավելի դրական ցուցանիշ, քան ինքը Հայաստանը³⁵ (մինչդեռ հատկանշական է, որ Ադրբեյջանը պատկանում է «անազատ պետությունների» թվին³⁶):

Հանդիսանում են արդյոք ԼԴՀ պետական մարմինները Հայաստանի Հանրապետության *de facto* մարմիններ: Բռնազավթման վերաբերյալ մեղադրանքների հիմնավորման հաջորդ տարբերակը Արցախի տարածքում գործող իշխանության մարմինների գործողությունների վերագրումն է Հայաստանի Հանրապետությանը: Հենց այս մոտեցումն է Ադրբեյջանն օգտագործել ՄԱԿ-ին հղած իր նամակում: Այսպես, Միջազգային հակաիրավական գործողու-

յունների համար պետությունների պատասխանատվության մասին հողվածներում սահմանվում է, որ «Միջազգային իրավունքի համաձայն՝ անձի կամ անձանց խնդիր արարքը համարվում է պետության գործողություն, եթե անձը կամ անձանց խումբն այդ գործողություններն իրականացնելիս փաստացի առաջնորդվում է պետության հանձնարարականներով կամ գործում է պետության ուղղորդման կամ վերահսկողության ներքո»³⁷:

Միջազգային դատարաններն ու տրիբունալները ոչ պետական մարմինների գործողությունների՝ պետություններին վերագրելու նպատակով կիրառում են երկու տարբեր չափանիշներ՝ «արդյունավետ վերահսկողության չափանիշ» (effective control test) և «ընդհանուր վերահսկողության չափանիշ» (overall control test): Առաջին չափանիշի համաձայն, որը մշտապես կիրառվել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից, որպեսզի գործողությունը վերագրելի լինի պետությանը, «պետք է ապացուցվի, որ Պետությունն իրականացրել է արդյունավետ վերահսկողություն ... [այն գործողությունների] նկատմամբ, որոնց ընթացքում տեղի են ունեցել ենթադրյալ խախտումները»³⁸:

Նիկարագուայի տարածքում և նրա դեմ ռազմական ու ռազմականացված գործողությունների վերոբերյալ գործում ՄԱԿ-ի միջազգային դատարանը տվել է հետևյալ մեկնաբանությունը. «Պետության մասնակցությունը [ոչ պետական մարմինների] ֆինանսավորմանը, կազմակերպմանը, վերապատրաստմանը, սպասարկմանը և զինմանը, ինչպես նաև նրանց բոլոր գործողությունների պլանավորումը, որքան էլ լինեն էական և վճռորոշ, միևնույնն է, ինքնին բավարար չեն ... վերագրելիության համար: Անգամ պետության կողմից զինված ջրկատի նկատմամբ իրականացվող ընդհանուր վերահսկողությունը՝ կախվածության բարձր աստիճանով, ինքնին չի նշանակում, առանց հավելյալ ապացույցների, որ [Պետությունը] ուղղորդում է այդ գործո-

դրությունները կամ նպաստում է դրանց իրականացմանը»³⁹:

Ի տարբերություն ՄԱԿ-ի Միջազգային դատարանի՝ նախկին Հարավսլավիայի տարածքում միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների համար պատասխանատու անձանց հետապնդման միջազգային քրեական տրիբունալը (այսուհետ՝ ՀՄՔՏ) կիրառում է այսպես կոչված «համընդհանուր վերասկողության» չափանիշը, որը «արդյունավետ վերահսկողության» չափանիշի համեմատ սահմանում է զգալիորեն ավելի ցածր շեմ: Այսպես, ՀՄՔՏ-ի դիրքորոշմամբ. «Պետության վերահսկողությունը իրեն ենթարկվող զինված ջոկատների կամ ռազմական կամ ռազմականացված խմբավորումների նկատմամբ կարող է լինել համընդհանուր բնույթի... Միջազգային իրավունքի համաձայն՝ բոլորովին էլ պարտադիր չէ, որ վերահսկող իշխանությունները պլանավորեն իրենց ենթակա միավորների բոլոր գործողությունները, ընտրեն նրանց ռազմական թիրախները կամ տան ռազմական գործողությունների վերաբերյալ հատուկ հանձնարարականներ... Միջազգային իրավունքի կողմից պահանջվող վերահսկողությունը կարելի է համարել հաստատված, երբ պետությունը ... ունի դերակատարություն զինված խմբի գործողությունների կազմակերպման, կորդինացման և պլանավորման մեջ՝ ի հավելում այդ խմբի ֆինանսավորմանը, նախապատրաստմանը կամ օպերատիվ օժանդակության տրամադրմանը»⁴⁰:

Սակայն Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժելու վերաբերյալ կոնվենցիայի կիրառման վերաբերյալ գործով Միջազգային դատարանը հերքեց «համընդհանուր վերահսկողության» չափանիշի կիրառելիությունը⁴¹՝ նշելով, որ ՀՄՔՏ-ն չունի պետության պատասխանատվության հիմնահարցերով զբաղվելու առաջադրանք, և որ «համընդհանուր վերահսկողության» չափանիշը կարող է օգտագործվել, օրինակ, երբ որոշ-

վում է միջազգային⁴² է արդյոք ընդհարումը, թե՞ ոչ⁴³: Անգամ ինքը՝ ՀՄՔՏ-ն, ընդունում է, որ անհրաժեշտ պետական վերահսկողության աստիճանը կախված է կոնկրետ պայմաններից⁴⁴: Ուստի պետք է նշել, որ բռնազավթումը պետք է լինի արդյունավետ՝ իր բնորոշումից իսկ ելնելով, քանի որ «արդյունավետ վերահսկողությունը» բռնազավթման անօտարելի հատկանիշներից է⁴⁵:

Այս իմաստով Արցախի պարագայում բավարար է վկայակոչել մի քանի փաստ: 1993 թ. հունիսի 14-ին ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ստիպված էր մեկնել ԼՂՀ, որպեսզի համոզի տեղի խորհրդարանին ընդունել ԱՄՆ-ի և Ռուսաստանի կողմից առաջարկվող խաղաղության ծրագիրը, և չնայած դա նրան հաջողվեց⁴⁶, միևնույն է, Ադրբեջանում սկսված քաղաքական անհանգստություններից հետո՝ հունիս ամսվա վերջին, արցախյան զինված ուժերը շարունակեցին զինված գործողությունները: Փաստորեն ՀՀ-ն չէր իրականացնում «արդյունավետ վերահսկողություն» ԼՂՀ խորհրդարանի նկատմամբ: Այն չէր իրականացնում անգամ «համընդհանուր վերահսկողություն» ԼՂՀ զինված ուժերի նկատմամբ: Այսպես, մի շարք ռազմական գործողություններ, մասնավորապես Քարվաճառի (Քելբաջարի) ազատագրումը, իրականացվել են հակառակ ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ ՀՀ Նախագահի կոչերի⁴⁶:

Հատկանշական է, որ Անվտանգության խորհրդի թիվ 853 բանաձևը⁴⁷ կոչ էր անում ՀՀ կառավարությանը «շարունակել օգտագործել իր ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի շրջանի հայկական բնակչության նկատմամբ՝ թիվ 822 բանաձևի պահանջները պահպանելու նպատակով»: Հայաստանի ազդեցության մասին խոսելիս «շարունակել» բառի կիրառումը վկայում է այն մասին, որ ՀՀ կառավարությունը ձեռնարկել էր փորձեր՝ կանգնեցնելու արցախյան զինված ուժերի առաջխաղացումը անգամ մինչև բանաձևի ընդունումը, սակայն ա-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պարոյուն:

Նույն տրամաբանությամբ թիվ 884 բանաձևը,⁴⁸ օգտագործելով նույն շարադրանքը, նաև կոչ էր անում Հայաստանի Հանրապետությանը «երաշխավորել, որ ներգրավված զինված ուժերը չստանան միջոցների իրենց ռազմական գործողությունների ընդարձակման համար...»: Այս ձևակերպումից հստակ երևում է, որ Անվտանգության խորհուրդը չէր գտնում, որ ՀՀ կառավարությունն ինքն է ռազմական օժանդակություն տրամադրում, բայց և ունակ էր կանխարգելելու նման օժանդակության տրամադրումը:

Յուրացրե՞լ են արդյոք ԼՂՀ-ն կամ Հայաստանի Հանրապետությունը Ադրբեջանի իշխանական գործառույթները, և ժառանգե՞լ է արդյոք ԱՀ-ն իրավական տիտղոս: Ռոշակի իրավիճակ որպես բռնազավթում որակելու անհրաժեշտ տարրերից մեկը, ինչպես արդեն նշվեց, տեղական իշխանությունների գործառույթների յուրացումն է: Հետևաբար ՀՀ-ն կարող է օկուպանտ լինել միայն այն դեպքում, եթե Ադրբեջանը ունեցել և ունի օրինական տիտղոս Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

Ադրբեջանի դիրքորոշման համաձայն վերջինս Լեռնային Ղարաբաղի նկատմամբ տիտղոս է ժառանգել *uti possidetis* սկզբունքի հիման վրա⁴⁹, ըստ որի՝ մայրապետության, տվյալ դեպքում ԽՍՀՄ-ի վարչական սահմանները պետք է վերածվեն նոր անկախ պետությունների միջազգային սահմանների⁵⁰: Սակայն Լեռնային Ղարաբաղի դեպքում տվյալ սկզբունքի կիրառելիությունը առաջացնում է խնդիր նախ և առաջ ԽՍՀՄ-ի ներքին վարչական սահմանի ստեղծման օրինականության տեսանկյունից: Նախ, *uti possidetis* սկզբունքը բոլորովին էլ բացարձակ չէ⁵¹: Այսպես օրինակ Արևմտյան Սահարայի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում ՄԱԿ-ի Միջազգային դատարանը, քննարկելով

տարածաշրջանի ինքնորոշման իրավունքը ժառանգած վարչական սահմանների շրջանակներում, նախ ցույց տվեց, որ Արևմտյան Սահարայի նկատմամբ տարածքային պահանջներ ներկայացնող պետությունները՝ Մավրիթանիան և Մարոկոն, նախքան Իսպանիայի կողմից Արևմտյան Սահարայի գաղութացումը դրա տարածքի նկատմամբ ինքնիշխանություն չեն ունեցել⁵², ինչի առկայությունն ըստ երևույթին կազդեր Արևմտյան Սահարայի պետականության ստեղծման կամ առնվազն դրա ուրվագծի վրա:

Ի տարբերություն Արևմտյան Սահարայի՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում հակամարտությունն առկա էր դեռևս նախքան խորհրդային Միության ստեղծումը: Այսպես, 1918թ. մայիսին Անդրկովկասում անկախ հանրապետությունների ստեղծման պահից⁵³ ընդհուպ մինչև տարածաշրջանի խորհրդայնացումը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ փաստացի վերահսկողությունը մի քանի անգամ անցել է մի կողմից մյուսին: Նախ, անկախ հանրապետությունների ստեղծման պահից տեղական իշխանությունը Լեռնային Ղարաբաղում գտնվում էր տեղի հայերի ձեռքում, որոնք գումարեցին իրենց Առաջին համազումարը (մարմին, որն իրականացնում էր իշխանական գործառույթներ) 1918 թ. օգոստոսի 5-ին՝ հրաժարվելով ճանաչել ադրբեջանական իշխանությունը⁵⁴ և բուն Հայաստանի ռազմական աջակցությամբ պայքարելով ադրբեջանական և թուրքական զորքերի դեմ⁵⁵:

Սակայն 1919 թ. հունվարի 15-ին Բաքվում գտնվող բրիտանական զինված ուժերը տարածաշրջանում նշանակեցին մահմեդական կառավարիչ (գեներալ-գուբերնատոր)⁵⁶, որի իշխանությունը, սակայն, կտրականապես մերժվեց տեղացիների կողմից: Այնուամենայնիվ բրիտանական զինված ուժերի օգնությամբ⁵⁷ և անկանոն ջոկատների միջոցով 1919 թ. հունիսին հայաբնակ գյուղերից մեկն այրելուց և շուրջ 600 մարդ կոտորելուց հետո⁵⁸ նորանշա-

նակ կառավարիչը օգոստոսի 15-ին Ղարաբաղի հայկական Յոթերորդ հանրագումարին ստիպեց ընդունել, դաշնագրի շարադրանքի համաձայն, «[նոր գեներալ-գուբերնատորի] ժամանակավոր իշխանությունը նախքան Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշման կայացումը...»⁶⁰: Այս իրադարձությանը, սակայն, 1920 թ. փետրվարին հետևեցին հայերի նոր ջարդեր՝ այս անգամ արդեն թուրքական զինված ուժերի միջոցով⁶¹:

Հետաքրքիր է, որ այս փաստը երբեմն մի շարք հեղինակների կողմից մեկնաբանվում է որպես ադրբեջանական տիտղոսի ապացույց⁶¹: Եվ թեև անհրաժեշտ է նշել, որ տարածքային ձեռքբերումները զինված ուժի միջոցով դեռևս ենթակա չէին համընդհանուր արգելքի միջազգային իրավունքում, միևնույն է, տեղական բնակչության դիմադրությունը և վերջինիս հետագա ճնշումը, ինչպես նաև երրորդ կողմ հանդիսացող գաղութարար տիրության՝ Բրիտանիայի զինված ուժերի միջամտությունը ստիպում են բնութագրել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի առաջին հանրապետության կազմում ոչ թե որպես մետրոպոլիայի բաղկացուցիչ մաս, այլ ոչ ինքնակառավարվող տարածք, այսինքն՝ տարածք՝ օժտված արտաքին ինքնորոշման իրավունքով: Այսպես, պրոֆեսոր Քրոուֆորդը նշում է, որ «մետրոպոլիա» եզրույթը նախ և առաջ տարածքի՝ պետության հետ ունեցած պատմական, ինչպես նաև աշխարհագրական կապի բնութագիրն է⁶²: Եվ եթե Արցախն աշխարհագրական առումով կից է և՛ Ադրբեջանին, և՛ Հայաստանին, ապա նրա էթնիկ կազմն ու պատմությունը բոլորովին էլ չեն խոսում Ադրբեջանի օգտին: Ավելին, այն, որ Ադրբեջանը որպես անկախ պետություն գոյություն չի ունեցել նախքան 1918 թ. (փաստ, որը հաստատվել է անգամ Ազգերի լիգայի կողմից⁶³), Արցախի՝ ադրբեջանական մետրոպոլիայի մաս լինելու վերաբերյալ հավակնությունները դարձնում են պարզապես անհիմն:

Հետագա պատմական իրադարձու-

յունները, սակայն, միայն ավելի խճճեցին իրավիճակը: 1920 թ. Ադրբեջանն ու Հայաստանը խորհրդայինացվեցին, ինչին հաջորդեց Ադրբեջանի հրաժարումը տարածքային հավակնություններից՝ 1920 թ. նոյեմբերի 30-ին ճանաչելով Լեռնային Ղարաբաղի՝ խորհրդային Հայաստանի բաղկացուցիչ մաս լինելու փաստը⁶⁴: Այս հանգամանքը 1921թ. հուլիսի 4-ին հաստատվեց նաև Կոմկուսի կովկասյան բյուրոյի կողմից⁶⁵: Սակայն հենց հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, բյուրոն կրկին միստ գումարեց, որտեղ Ի. Ստալինի ճնշման ներքո առանց քվեարկության ընդունեց հակառակ բովանդակության բանաձև՝ ճանաչելով ադրբեջանական իշխանությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ⁶⁶: Այդպիսով, հաստատված սահմանը վերածվեց նաև ներքին վարչական սահմանի 1922 թ.-ին:

Այս խճճված իրադրությունը կարող է ունենալ առնվազն երկու իրավական լուծում: Նախ, եթե հաշվի առնենք, որ Կարմիր բանակի ներխուժումը անդրկովկասյան պետություններ ոչ այլ ինչ էր, քան վերջիններիս *de facto* նվաճումն Ռուսաստանի ԽՍՀՄ կողմից, անհրաժեշտ է տալ այդ նվաճման և բոլոր այն հաջորդ իրադարձությունների իրավական գնահատականը, որոնց մասնակցել է ՌԽՍՀՄ-ն: Հատկանշական է, որ խորհրդային Ռուսաստանը իր գոյության առաջին իսկ տարիներից բնութագրել է ուժի գործադրումը որպես միջազգային հակաիրավական արարք⁶⁷: Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ տարբեր դատական ատյաններ բազմիցս օգտագործել են պետությունների՝ իրենց միջազգային-իրավական պարտավորությունների վերաբերյալ արտահայտած դատողությունները այդ իսկ պետությունների դեմ՝ որպես մնացած պարտավորություններ ստանձնած լինելու ապացույց⁶⁸:

Հետևաբար, միջազգային իրավունքում կիրառվող *ex injuria jus non oritur* սկզբունքի համաձայն՝ հակաիրավական արարքը չի կարող լինել շահերի և իրավունքների աղբյուր⁶⁹: Ոչ միայն ՄԱԿ-ի Միջազգային

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

դատարանը, այլ նաև Միջազգային արդարադատության մշտական պալատն իրենց վճիռներում հաստատել են սույն սկզբունքի կիրառելիությունը տարածքային վեճերում⁷⁰: Այս տեսանկյունից կարմիր բանակի ներխուժումը անդրկովկասյան պետություններ, ինչպես նաև Կոմկուսի կովկասյան բյուրոյի որոշումը ոչ այլ ինչ են, եթե ոչ հակաիրավական արարք, այսինքն՝ *injuria*, որոնք չեն կարող լինել իրավունքի աղբյուր, այսինքն՝ *jus non oritur*: Նման պարագայում Ադրբեջանի Հանրապետության կողմից *uti possidetis* սկզբունքի վկայակոչումը դառնում է լիովին չհիմնավորված:

Մյուս կողմից, Կոմկուսի կովկասյան բյուրոյի որոշումը ոչ այլ ինչ է, քան արդեն հաստատված ոչ ինքնակառավարվող տարածքի կարգավիճակի վերահաստատում, որը հետագայում արդեն այդ տարածքի բնակչությանը պետք է տար արտաքին ինքնորոշման իրավունք նորանկախ Ադրբեջանից:

IV. Զինադադարի խախտումներ. ինքնապաշտպանություն, թե՞ ուժի գործադրման միջազգային-իրավական արգելքի խախտում

Չնայած 1994 թ. զինադադարին՝ ԱՀ-ն պարբերաբար սպառնում է լուծել արցախյան հակամարտությունը ռազմական ճանապարհով՝ փորձելով նման հավանական ռազմական լուծումը որակել որպես ինքնապաշտպանություն: Նման կեցվածքին իրավական զնահատական տալն ավելի է կարևորվում՝ հաշվի առնելով զինադադարի խախտումների հաճախակիացումը 2010թ.:

Այս խնդրի լուծումն իհարկե շատ պարզ է, եթե Հայաստանի Հանրապետությունը չի գործադրել ագրեսիա և չի բռնազավթել Լեռնային Ղարաբաղը. ադրբեջանական հարձակումներն ու սպառնալիքներն այս

պարագայում ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում են: Սակայն հարցի ամբողջական իրավական վերլուծության նպատակով անհրաժեշտ է քննարկել խնդիրը նաև ԱՀ դիրքերի ճշմարտացիության կանխավարկածից: Կամ այլ խոսքերով՝ իսկ ի՞նչ իրավական որակում պետք է տալ ԱՀ գործողություններին, եթե միջազգային իրավունքի տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունն իրոք բռնազավթած լինել Լեռնային Ղարաբաղը:

Եթովպիա – Էրիթրեա զանգատների հանձնաժողովը, որն ի թիվս այլոց կոչված էր լուծելու նաև այդ երկու պետությունների միջև ուժի գործադրման և տարածքային հավակնությունների վերաբերյալ խնդիրներ, նշել է. «Պետությունների պրակտիկան ... ցույց է տալիս, որ ինքնապաշտպանությունը չի կարող վկայակոչվել տարածքային վեճեր կարգավորելիս: Այս կապակցությամբ հանձնաժողովը նշում է, որ այսօր տարածքային վեճերը պետությունների միջև այնքան հաճախակի են, որ ուժի կամ ուժի սպառնալիքի գործադրման արգելքից ցանկացած բացառություն մի տարածքի նկատմամբ, որը ենթադրաբար ապօրինի կերպով բռնազավթված է, կստեղծեր հսկայական և վտանգավոր բաց միջազգային իրավունքի այդ հիմնարար կանոնում»⁷¹:

Այս նույն մոտեցումը հետագայում վերահաստատվել է նաև Արբիտրաժային մշտական դատարանի կողմից *Գայանան ընդդեմ Սուրինամի* գործում⁷² (ուր Սուրինամը ուժ էր գործադրել Գայանայի կողմից ենթադրաբար օկուպացված մայրցամաքային ելուստի սահմաններում), այն բազմիցս վերահաստատվել է նաև պետությունների պրակտիկայում: Օրինակ, երբ 1961թ. Հնդկաստանը նվաճեց պորտուգալական գաղութներ Գոան, Դամաոն և Դիուև՝ արդարացնելով սեփական գործողությունները Պորտուգալիայի՝ այդ կղզիների վրա անօրինական ներկայությամբ, այն քննադատվեց Անվտանգության

խորհրդի պետությունների մեծամասնության կողմից (բացառությամբ ԽՍՀՄ-ի, որը վետոյի ենթարկեց Չնդկաստանին դատապարտող բանաձևը)³: Նույնը հաստատում են նաև միջազգային իրավունքի մի շարք հեղինակավոր մասնագետներ⁴: Այսպես, ամերիկյան իրավաբան Օսկար Շախտերը նշել է, որ «ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված ուժի գործադրման արգելքում «տարածքային ամբողջականություն» եզրույթը վերաբերում է այն պետություններին, որոնք փաստացի իշխանություն են իրականացնում այդ տարածքի նկատմամբ՝ անկախ այդ իշխանության օրինականության վերաբերյալ վեճերի»⁵: Նման մոտեցումը լիովին արդարացված է նաև ժամանակակից միջազգային իրավունքի կողմից պաշտպանվող արժեքների առաջնայինության տեսանկյունից: Այսպես, ՄԱԿ-ի Կանոնադրության կառուցվածքը հստակորեն վկայում է այն մասին, որ խաղաղության և անվտանգության պահպանումը համարվում են Սիավորված ազգերի առաջնային նպատակը⁶: Ինչպես մատնանշվում է հենց Կանոնադրության նախաբանում, այն նպատակ է հետապնդում «... փրկելու գալիք սերունդները պատերազմի արհավիրքից ... և վերահաստատել հավատը մարդու հիմնարար իրավունքների ... նկատմամբ»: Հասկանալի է, որ նման տրամաբանությամբ զինադադարի խախտումներն ավելի են խարխլում միջազգային խաղաղությունը և վտանգում ՄԱԿ-ի Կանոնադրության առաջնային նպատակները, քան երկարածոված ենթադրյալ «բռնազավթում», որի

պահպանման ընթացքում տեղի չեն ունենում ռազմական գործողություններ և չեն առաջանում մարդկային զոհեր:

Այս տեսանկյունից ԱՅ դիրքորոշումը լիովին անհիմն է: Այսպես, Ադրբեյջանի Հանրապետության՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հղած նամակում նշվում է. «*Երբ զինված հարձակումն առաջացնում է շարունակական արդյունքներ (օկուպացիայի տեսքով), և այն ժամանակահատվածում, որն անցնում է այդ զինված հարձակման սկզբից, տուժող կողմը չի մնջում, այլ շարունակում է ծնշում գործադրել՝ փորձելով լուծել վեճը խաղաղ ճանապարհով, ինքնապաշտպանության իրավունքը շարունակում է մնալ չվնասված՝ անկախ այն երկար ժամանակահատվածից, որն ընկած է (անօրինական) ուժի գործադրման սկզբնական պահից ընդհուպ մինչև (օրինական) հակահարվածը*»⁷:

Այս մոտեցումն ակնհայտ հակասության մեջ է մեր կողմից արդեն վերը հիշատակված դատական որոշումների, պետությունների միջազգային պրակտիկայի, ինչպես նաև հեղինակավոր մասնագետների աշխատությունների հետ: Անգամ եթե ՀՀ մասնակցության վերաբերյալ ԱՅ գնահատականները միջազգային իրավունքի տեսանկյունից լինեին ճիշտ, միևնույն է, վերջինիս կողմից զինադադարի պարբերական խախտումները և հատկապես ուժի գործադրման և արցախյան հակամարտությունը զինված ճանապարհով լուծելու սպառնալիքները ոչ այլ ինչ են, եթե ոչ ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

¹ Տե՛ս, օրինակ, Interview of President of Azerbaijan I. Aliiev to Euronews (Feb. 2, 2010), հասանելի է հետևյալ կայքում՝ <http://www.euronews.net/2010/02/02/interview-with-ilham-aliyev-president-of-azerbaijan/>.

² Letter dated 22 December 2008 from the Permanent Representative of Azerbaijan to the

United Nations addressed to the Secretary-General, U.N. Docs. A/63/662-S/2008/812, (Dec. 22, 2008).

³ Տե՛ս նույն տեղը:

⁴ Definition of Aggression art. 3(a), Annex to G.A. Res. 3314 (XXIX), Supp. No. 31, U.N. Doc. A/9631 (1974) [hereinafter GA Definition of Aggression].

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ⁵ *Military and Paramilitary Activities in and Against Nicaragua (Nic. v. U.S.)*, 1986 I.C.J. Rep. 14, p. 103, para. 195 [hereinafter *Nicaragua*].
- ⁶ Տե՛ս, օրինակ, M. M. Goma, “The Definition of the Crime of Aggression and the ICC Jurisdiction over the Crime”, in *The International Criminal Court and the Crime of Aggression* 55 (M. Politi & G. Nesi ed., Ashgate 2004), p. 74 (“the Court, by referring to that particular sub-paragraph wanted to say that it had the same status as the others which were already reflective of custom”), տե՛ս նաև Y. Dinstein, *War, Aggression and Self-Defence* (4th ed., Cambridge University Press 2005), p. 129 (“[t]he fact that paragraph (g) has been pronounced by the [ICJ] to be declaratory of customary international law is possibly indicative that other portions of Article 3 may equally be submitted under the heading of true codification”):
- ⁷ Տե՛ս, օրինակ, *Legality of the Threat or Use of Nuclear Weapons*, Advisory Opinion, 1996 I.C.J. Rep. 226, pp. 254-255, para. 70 (“General Assembly resolutions ... can, in certain circumstances, provide evidence important for establishing the existence of a rule or the emergence of an *opinio juris*”), տե՛ս նաև *Nicaragua*, հղում թիվ 5, p. 100, para. 188, and p. 106, para. 202.
- ⁸ A. Cassese, *International Criminal Law* (1st ed., Oxford University Press 2003), p. 113.
- ⁹ *The speech is available in* S. D. Murphy, “Contemporary Practice of the United States Relating to International Law”, 95 *American Journal of International Law* 387 (2001), p. 400, տե՛ս նաև O. Solera, *Defining the Crime of Aggression* (Cameron May 2007), pp. 201-202 (“[t]he Consensual Definition of Aggression is simply] just another diplomatic effort that went without important consequences”), P. Wilson, *Aggression, Crime and International Security: Moral, Political and Legal Dimensions of International Relations* (Routledge, Taylor & Francis Group: London and New York 2009), p. 82.
- ¹⁰ Goma, op.cit, p. 73.
- ¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 74:
- ¹² *Nicaragua*, հղում թիվ 5, p. 103, para. 195.
- ¹³ Տե՛ս նույն տեղը, p. 62-65, para. 109-115:
- ¹⁴ Տե՛ս նույն տեղը, p. 104, para. 195:
- ¹⁵ Articles on Responsibility of States for Internationally Wrongful Acts, art. 8, G.A. Res. 56/83, Annex, Agenda Item 162, U.N. Doc. A/RES/56/83 (2001).
- ¹⁶ Տե՛ս, օրինակ, Solera, հղում թիվ 9, p. 188.
- ¹⁷ Regulations concerning the Laws and Customs of War on Land, Art. 42, Annex to the Convention respecting the Laws and Customs of War on Land, Oct., 18, 1907, հասանելի է հետևյալ կայքում՝ <http://www.icrc.org/ihl.nsf/0/1d1726425f6955aec125641e0038bfd6>.
- ¹⁸ Տե՛ս U.N. Charter, Arts. 2(4), 39-51; Covenant of the League of Nations, Arts. 10, 11, June 28, 1919, in 1 *League of Nations – Official Journal* 3 (1920); Treaty between the United States and other Powers Providing for the Renunciation of War as an Instrument of National Policy, Art. 1, Aug. 27, 1928, 94 L.N.T.S. 57.
- ¹⁹ Definition of Aggression, հղում թիվ 4, art. 3(g).
- ²⁰ Y. Dinstein, *The International Law of Belligerent Occupation* (Cambridge University Press 2009), pp. 2-3.
- ²¹ *Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory*, Advisory Opinion, 2004 I.C.J. Rep. 136, p. 194, para. 139 (“Article 51 of the Charter ... recognizes the existence of an inherent right of self-defence in the case of armed attack by one State against another State”) [hereinafter *Wall Case*].
- ²² S.C. Res. 822, U.N. Doc. S/RES/822, para. 1 (April 30, 1993); S.C. Res. 853, U.N. Doc. S/RES/853, paras. 1, 3 (July 29, 1993); S.C. Res. 884, U.N. Doc. S/RES/874, para. 5 (Nov. 12, 1993); S.C. Res. 884, U.N. Doc. S/RES/884, paras. 1, 4 (Nov. 12, 1993).
- ²³ S.C. Res. 822, տե՛ս վերը, preamble.
- ²⁴ Տե՛ս, օրինակ, Report of the OSCE Fact-Finding Mission (FFM) to the Occupied

- Territories of Azerbaijan Surrounding Nagorno-Karabakh (NK), in U.N. Doc. A/59/747-S/2005/187 (March 21, 2005).
- ²⁵ Letter to the UN, հղում թիվ 2, p. 8, para. 19.
- ²⁶ *Wall Case*, հղում թիվ 21, p. 167, para. 78; տե՛ս նաև *Armed Activities on the Territory of the Congo (The D.R.C. v. Uganda)*, 2005 I.C.J. Gen. List No. 116, p. 59, para. 172.
- ²⁷ *The D.R.C. v. Uganda*, տե՛ս վերը, p. 59, para. 173.
- ²⁸ Y. Shany, "Faraway, So Close: The Legal Status of Gaza After Israel's Disengagement", 8 *Yearbook of International Humanitarian Law* 369 (2006), p. 376.
- ²⁹ *The D.R.C. v. Uganda*, հղում թիվ 27, p. 59, para. 175.
- ³⁰ Տե՛ս նույն տեղում:
- ³¹ Letter to the UN, հղում թիվ 2, p. 2, para. 2.
- ³² Dinstein, հղում թիվ 20, p. 33.
- ³³ Տե՛ս, օրինակ, Freedom House, *Freedom in the World Report – Nagorno-Karabakh [Armenia/Azerbaijan]* (2009), հասանելի է հետևյալ կայքում՝ http://freedomhouse.org/inc/content/pubs/fiw/inc_country_detail.cfm?year=2009&country=7740&pf.
- ³⁴ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների ցանկը հասանելի է հետևյալ կայքում՝ <http://nkr.am/en/permanent-representations/104/>.
- ³⁵ Freedom House, *Freedom in the World Report – Nagorno-Karabakh [Armenia/Azerbaijan]*, հղում թիվ 41.
- ³⁶ Freedom House, *Freedom in the World Report – Azerbaijan* (2009), հասանելի է հետևյալ կայքում՝ http://freedomhouse.org/inc/content/pubs/fiw/inc_country_detail.cfm?year=2009&country=7560&pf.
- ³⁷ Articles on Responsibility of States for Internationally Wrongful Acts, *հղում թիվ 15*, Art. 8.
- ³⁸ *Nicaragua*, հղում թիվ 8, p. 65, para. 115; տե՛ս նաև *Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro)*, 2007 I.C.J., p. 143, para. 399, հասանելի է հետևյալ կայքում՝ www.icj-cij.org [hereinafter *Genocide Case*].
- ³⁹ *Nicaragua*, տե՛ս վերը:
- ⁴⁰ *Prosecutor v. Tadić*, Case No. IT-94-1-A, Judgment of the Appeals Chamber, para. 137 (July 15, 1999).
- ⁴¹ *Genocide Case*, հղում թիվ 38, para. 403; բայց տե՛ս A. Cassese, "The Nicaragua and Tadić Tests Revisited in Light of the ICJ Judgment on Genocide in Bosnia", 18 *European Journal of International Law* 649, 653-654 (2007) (claiming that the ICJ did not base the 'effective control' test on customary international law, general principles of State responsibility or general principles of international law, but was rather guided by 'practical wisdom and judicial restraint').
- ⁴² *Genocide Case*, տե՛ս վերը, para. 404.
- ⁴³ *Tadić*, հղում թիվ 40, para. 137 ("the question at issue is whether a *single* private individual or a *group that is not militarily organised* has acted as a *de facto* State organ when performing a specific act, it is necessary to ascertain whether specific instructions concerning the commission of that particular act had been issued by that State to the individual or group in question").
- ⁴⁴ Dinstein, հղում թիվ 20, pp. 42-45.
- ⁴⁵ Thomas de Waal, *Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War* (New York University Press: New York and London 2003), p. 213.
- ⁴⁶ Տե՛ս նույն տեղում, p. 212.
- ⁴⁷ S.C. Res. 853, U.N. Doc. S/RES/853, para. 8 (July 29, 1993).
- ⁴⁸ S.C. Res. 884, U.N. Doc. S/RES/884, para. 2 (Nov. 12, 1993).
- ⁴⁹ Letter dated 26 December 2008 from the Permanent Representative of Azerbaijan to the United Nations addressed to the Secretary-General, UN Doc. A/63/664-S/2008/823 (Dec. 8, 2008), paras. 155-167; Letter to the UN, հղում թիվ 2, p. 5, para. 11.
- ⁵⁰ *Frontier Dispute (Burkina Faso/Mali)*, 1986 I.C.J. Rep. 554, p. 566, para. 23.
- ⁵¹ E. McWhinney, "Self-Determination of Peoples and Plural-Ethnic States: Secession and State Succession and the Alternative, Federal Option", 294 *Recueil des Cours* 167, 229-235 (2002).
- ⁵² *Western Sahara*, Advisory Opinion, 1975 I.C.J. Rep. 12, p. 68, para. 162.
- ⁵³ C. J. Walker, *Armenia: The Survival of a Nation*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- (2nd edn., St. Martin's Press, NYC, 1990), pp. 256-257.
- ⁵⁴ C. Mutafian et al., *The Caucasian Knot; The History and Geo-Politics of the Nagorno-Karabakh* (Zed Books: London & New Jersey 1994), p. 116.
- ⁵⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 116-118.
- ⁵⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 120:
- ⁵⁷ Տե՛ս նույն տեղը, p. 123:
- ⁵⁸ Walker, հղում թիվ 53, p. 270; J. M. Douglas, *The Armenians* (J.J. Winthrop Corp. Publisher, 1992), p. 394.
- ⁵⁹ Mutafian et al., հղում թիվ 54, p. 123.
- ⁶⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 126:
- ⁶¹ Տե՛ս, Svante Cornell, *The Nagorno-Karabakh Conflict* (Uppsala University 1999), p. 7; T. Potier, *Conflict in Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia: A Legal Appraisal* (Kluwer Law International, The Hague/London/Boston 2001), pp. 2-3.
- ⁶² J. Crawford, *The Creation of States in International Law* (2nd ed., Clarendon Press, Oxford 2006), 606.
- ⁶³ Report of the Fifth Committee of the Assembly of the League of Nations (Dec. 1, 1920), *cited in* Letter dated 23 March 2009 from the Permanent Representative of Armenia to the United Nations addressed to the Secretary-General, U.N. Docs. A/63/781-S/2009/156, p. 8 (March 24, 2009) (“this territory, occupying a superficial area of 40.000 square miles, appears to have never formerly constituted a State, but has always been included in larger groups such as the Mongol or Persian and since 1813 the Russian Empire. The name Azerbaijan which has been chosen for the new Republic is also that of the neighbouring Persian province”).
- ⁶⁴ Potier, հղում թիվ 61, p. 3.
- ⁶⁵ Տե՛ս նույն տեղը:
- ⁶⁶ Mutafian et al., հղում թիվ 54, p. 136.
- ⁶⁷ Տե՛ս И.И. Лукашук, *Современное право международных договоров: Том II Действие международных договоров* (Волтерс Клувер, Москва 2006), стр. 353.
- ⁶⁸ Մանրամասն տե՛ս M. Akehurst, “Custom as a Source of International Law”, *47 British Year Book of International Law* 1 (1974-1975), p. 2.
- ⁶⁹ Տե՛ս, օրինակ, I. Brownlie, *Principles of Public International Law* (7th ed., Oxford University Press 2008), p. 509; *Oppenheim's International Law, vol. 1 Peace* (9th ed. by R. Jennings & A. Watts, Longman: London 1992), pp. 183-184.
- ⁷⁰ Տե՛ս, *Jurisdiction of the Courts of Danzig*, Advisory Opinion, 1928 P.C.I.J. Series B, No. 15, p. 26; *Legal Status of Eastern Greenland*, 1933 P.C.I.J. Series A/B, No. 53, pp. 75, 95; *Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia*, Advisory Opinion, 1971 I.C.J. Rep. 16, pp. 46-47, paras. 91-95.
- ⁷¹ *Eritrea-Ethiopia Claims Commission (EECC): Partial Award – Jus Ad Bellum, Ethiopia's Claims 1-8*, [Dec. 19, 2005], *45 International Legal Materials* 430 (2006), pp. 433-434, para. 10.
- ⁷² *Arbitral Tribunal Constituted Pursuant to Article 287, and in Accordance with Annex VII, of the United Nations Convention on the Law of the Sea in the Matter of an Arbitration Between Guyana and Suriname*, Permanent Court of Arbitration [Sept. 17, 2007], *47 International Legal Materials* 227 (2008), p. 166, paras. 423-424.
- ⁷³ Տե՛ս M. Pomerance, *Self-Determination in Law and Practice: The New Doctrine in the United Nations* (Martinus Nijhoff Publishers: The Hague/Boston/London 1982), p. 49.
- ⁷⁴ Տե՛ս, օրինակ, P. Malanczuk, *Akehurst's Modern Introduction to International Law* (7th ed., Routledge: London/New York 1997), pp. 314-315.
- ⁷⁵ O. Schachter, *International Law in Theory and Practice* (Martinus Nijhoff Publishers; Dordrecht/Boston/London 1991), p. 117.
- ⁷⁶ R. Wolfrum, “Article 1 of the UN Charter”, in *The Charter of the United Nations: A Commentary* (B. Simma ed., Oxford University Press 2002), p. 40.
- ⁷⁷ Letter to the UN, հղում թիվ 2, p. 10, para. 24.

CERTAIN LEGAL ISSUES CONCERNING THE LEGAL REGULATION OF THE ARTSAKH CONFLICT

Levon GEVORGYAN

*PhD student, Yerevan State University,
LLM, Washington College of Law,
American University*

The logic of the Republic of Azerbaijan, which states that Armenia has occupied the territory of the former, that occupation amounts to a form of aggression and that it is permissible to resort to self-defence against occupation, is not in accordance with international law. The international legal criteria of occupation are not satisfied in the case of Nagorno-Karabakh. Furthermore, occupation cannot be consid-

ered as a form of aggression. The term “occupation” does not appear in any instrument enshrining norms of *jus ad bellum*, but only in treaties relating to international humanitarian law. The only instrument, which makes an attempt to qualify occupation as a form of aggression — the General Assembly resolution 3314 — does not reflect customary international law. Even assuming that Armenia has in fact occupied the territory of Azerbaijan, still international courts of law have not recognized the right of states to resort to self-defence against occupation. The violations of the ceasefire are, thus, breaches of the prohibition of the use of force of the UN Charter.
